ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 364 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի N 53-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (ՀՎՀՀ՝ 01573524) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2023 թվականի հունվարի 18-ի «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից իրականացվող «Հայաստանում հողերի դեգրադացման կանխման (LDN) հանձնառությունների/պարտականությունների իրականացումը՝ դեգրադացված մարգագետինների կայուն կառավարման և վերականգնման միջոցով» ծրագրի մասին» N 53-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ալֆա-Էտալոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00454717) 2023 թվականի ապրիլի 17-ին կնքված՝ N ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԱՊՁԲ-23/28-2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դյուրակիր համակարգիչների (5 հատ) ձեռքբերում՝ 1,137,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Մեգաս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01326597) 2023 թվականի ապրիլի 17-ին կնքված՝ N ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԱՊՁԲ-23/28-1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգիչների (ամբողջը մեկում, 2 հատ) ձեռքբերում՝ 560,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Յունիքոմփ» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01815551) 2023 թվականի ապրիլի 17-ին կնքված՝ N ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԱՊՁԲ-23/28-3 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բազմաֆունկցիոնալ տպիչ սարքի ձեռքբերում՝ 679,166.66 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

22.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ